ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1678-Ա « 01 » ապրիլի 2026 թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության պահանջները, ինչպես նաև ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝

1. Երևան քաղաքի Բաբաջանյան–Աշտարակի խճուղի ճանապարհահատվածի անավարտ մասի (կմ 1+820-ից մինչև կմ 1+980, ներառյալ՝ 160 մ հիմնական ճանապարհ և շուրջ 110 մ մոտեցնող ճանապարհներ, ընդհանուր՝ 270 մ) նախագծանախահաշվային փաստաթղթերի վերանայման ծառայության ձեռքբերման ընթացակարգն իրականացնել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա մեկ անձից գնում կատարելու ձևով:

2. Հրավերը տրամադրել միայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված՝ գնման հայտում նշված անձին (հնարավոր մասնակցին):

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վրա:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակելու օրվան հաջորդող օրվանից:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ